Հավելված
ՀՀ կառավարության 2019 թվականի
օգոստոսի 8-ի N 1818 - Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԵՎ ՏԱՓԵՐԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-ՆԱԿՆԵՐՈՒՄ ԿՆՔՎՈՂ ԳՈՐԾԱՐՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Գույք նվիրաբերողը	ՀՀ Արարատի մարզի Շահումյանի և Տափերականի համայնքներ
Սեփականության իրավունք ձեռք բերողը	«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն
Նվիրաբերման պայմանագրի կնքման ժամկետը	Հողամասը նվիրաբերող մարմնի կողմից որոշումն ընդունելուց հետո 5-օրյա ժամկետում
Հողի սեփականության իրավունքների փոխանցում	Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման պահից
Նվիրաբերման պայմանագրի կնքման ծախսերը կատարվում են	«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության միջոցներով
Կողմերի պարտավորությունները	1. Նվիրաբերողը պարտավորվում է՝ 1) նվիրառուին տրամադրել երրորդ անձի իրավունքներից, փաստացի տիրապետումից ազատ տարածք. 2) իր լիազորությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նվիրառուին տրամադրել բարեգործական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ բոլոր թույլտվությունները: 2. Նվիրառուն պարտավոր է՝ 1) հողամասն օգտագործել բացառապես բարեգործական նպատակներով. 2) հողամասում բարեգործական նպատակով նախատեսված կառուցումներն իրականացնել նվիրաբերման պայմանագիրը կնքելու պահից երեք տարվա ընթացքում. 3) բացառել իր կողմից նվիրաբերման կարգով ձեռք բերված գույքի օտարումը, գրավադրումը, վարձակալության կամ օգտագործման տրամադրումը:
Կողմերի պատասխանատվությունը	Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատասխանատվություն են կրում պայմանագրի պայմանների խախտման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

19_1818